

ՀՀԺԿ
ԳԺԻ ԿԸՌՈՒՅՎ ԸԺՔՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԸՎԱՆ ՎԸՐԶՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ

ԱՎՏՈԱՐԳԵԼԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԻՆՔՆԱԱՐԳԵԼԱԿՄԱՆ ՈՒՂԵԿՅՈՂԻ
ՅԵՎ ԿՈՆԴՈՒԿՏՈՐԻ ՀԱՄԱՐ

ԸՆԴՐԿՈՎԿԵՍԵԸՆ ՅԵՐԿԸԹԳԺԻ ՎԸՐԶՈՒԹՅՈՒՆ

ԹԻՖԼԻՍ

1936

621.1

Խ-11

621.1

74020 AUG 30 JUL 2010
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՆՍՏԻԹԱՆԿԱԿԱՆ ԿԱԶՄԱՆԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԻՆՖՆԱՐԳԵԼԱԿԱՆ ՈՒՂԵԿՈՂԻ
ՅԵՎ ԿՈՆԴՈՒԿՏՈՐԻ ՀԱՄԱՐ

1009
39647
4018

Վ 614	Ներկա հրահանգը պետք է մտցվի «Յեր- կաթուղային գործակալներին ձևափոխ- ված» մատակարարման կանոններում (ԲԲ. 0/198) ըստ կարգի № 641 համարի տակ:
----------	--

ԼՇՁԿ-244 ՏՇՁԱ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՆՍՏԻԹԱՆԿԱԿԱՆ ԿԱԶՄԱՆԴԱՐԱՆ

Թարգմանիչ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Խմբագիր՝ ՍԱՐԳՍՅԱՆ
Թողարկիչ՝ ՄԻՐԿՈՎԻՉ

ԱՊՐԱՆՔԱՏԱՐ ԳՆԱՅԳՆԵՐԻ ԼՐԻՎ ԱՎՏՈԱՐ- ԳԵԼԱԿՄԱՆ ՓՈԽԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հրաման Հաղորդակցության նախապարհների ժողովրդական կոմիսարի 1935 թ. 8 հունիսի № 172/ց.

I.

Չնայած նրան, վոր ՀԾԺԿ-ի պարկուճ գտնվող վագոնների ընդհանուր քանակից ավտոարգելակային սարքերով սարքավորված ե 31 տոկոսը և մնացած վագոնների ճնշող մեծամասնությունը սարքավորված ե միջանցիկ փողերով, ավտոարգելակումը մինչև հիմա չի մտցրած, իսկ սարքված ավտոարգելակները գտնվում են անթույլատրելի խախտված դրուժյան մեջ, նրանցից շատերը գողացված են: Միանգամայն անբավարար ե դրված ավտոարգելակների նորոգումը և գնացքների պատրաստումն ուղարկման համար, նորոգման գծերի սնուցումը խտացրած ուղով չե կազմակերպված, հրամանատարական կազմը չե ուսումնասիրել արգելակային գործը և չե ղեկավարում նրան. արգելակների վորակյալ բանվորական ույթի մեծ հոսունություն կա. անհրաժեշտ պայքար չի մղվում սխտեմատիկ բնույթ կրող հափշտակումների և ավտոարգելակային սարքավորման փչացման դեմ:

Այդպիսի դրուժյունը հետադաշյում անհանդուրժելի համարելով և հաշվի առնելով տարանջատար

պարկի լրիվ ավտոարգելակման փոխադրելու բացառիկ նշանակութունը—վազոնների շրջանառութունն արագացնելու, յերթեկության անվտանգութունը բարձրացնելու և յերկաթուղիների աշխատանքի ընդհանուր լավացման համար—հրամայում եմ.

Յերկաթուղիների պետերին՝ ապրանքատար գընացքները փոխադրել լրիվ ավտոմատիկ արգելակման յերկաթուղիների ամբողջ ցանցում վոչ ուշ, քան 1935 թվի նոյեմբերի 1-ը:

Սահմանել գնացքների լրիվ ավտոարգելակման փոխադրման հետևյալ կարգը և հերթականութունը.

1. 1935 թվի ոգոստոսի 1-ից բոլոր ուղարկվող մարշրուտները հետևյալ յերկաթուղիներով և ուղղութուններով.

ա) Դոնեցի հարավային և Մ-Կուրսկի Կարմիր Լիման—Մոսկվա—Կուրսկի միջով ուղղությամբ.

բ) Դոնեցի, Հարավային, Արևմտյան, Մ. Բ. Բ. և Հոկտեմբերյան Կարմիր Լիման—Լենինգրադ (Լիմանի, Վորոժբայի և Լգովի միջով).

գ) Յեկատերինսկի և Դոնեցի — Կրիվորոժյե — Դնեպրոպետրովսկ—Դոնբաս.

դ) Հարավային Ուրալսկի, Ոմսկի, Տոմսկի—Մագնիտոգորսկ—Կուզբաս և Մագնիտոգորսկ—Կարագանդա (Պետրոպավլովսկի, Ոմսկի, Եյեսեյի միջով).

յե) Անդրկովկասյան—Բազու—Բաթում.

զ) Հյուս. Կովկասյան և Ազով-Սևծովյան—Մա-Գիաչկալա—Գրոզնի, Գրոզնի—Արմավիր—Տուապսե բողնի—Նովոռուսիսկ Կավկասյայի միջով: Ղ

2. 1935 թվի ոգոստոսի 15-ից բոլոր ուղարկվող մարշրուտները հետևյալ յերկաթուղիներով և ուղղութուններով.

ա) Հյուսիս. Կովկասյան, Ազով-Սևծովյան, Հարավ-Արևելյան և Մ. Կազանի—Գրոզնի — Բատայսկ—Մոսկվա (Լիխայա, Կոչետովկայի միջով).

բ) Կիրովի—Կիրովսկ—Մուրմանսկ.

գ) Դոնեցի և Յեկատերինսկի—Դոնբաս—Զնամենկա (Պլատինարկայի միջով).

դ) Միջին-Ասիական Կրասնովոդսկից սկած յերկաթուղու սահմաններում.

յե) Ռյազանո-Ուրալսկի, Մ-Կազանի և Մ-Կուրսկի-Նավթի և ձկան մարշրուտները Մարատովից Մոսկվա (Կոչետովկայի միջով).

զ) Անդրկովկասյան յերկաթուղիների բոլոր գընացքները բացառությամբ հավաքականների և տնտեսականների:

3. Սեպտեմբերի 1-ից բոլոր գնացքները բացի հավաքականների և տնտեսականների, հետևյալ յերկաթուղիներով և ուղղութուններով.

ա) Դոնեցի, Յեկատերինսկի, Հարավային, Կուրսկի, Հար.-Արևմտյան, Արևմտյան, Մ.-Բ. Բ. Հոկտեմբերյան, Հար.-Արևելյան և Ազով-Սևծովյան Դոմբասից դեպի Մոսկվա, Լենինգրադ, Մարիուպոլ, Խարկով, Ստալինգրադ, Ռոստով, Զնամենկա, Դարնիցա.

բ) Դոնեցի, Յեկատերինսկի-Կրիվորոժյե, Դնեպրոպետրովսկ, Դոնբաս,

գ) Մարշրուտային գնացքները հետևյալ ուղղութուններով. Կիրովո-Չվանկա (Կիրովյան յերկաթուղիներ), Րիբինսկ—Լենինգրադ (Հոկտեմբերյան յերկաթուղիներով).

դ) Պերմսկի, Հյուսիսային, Հոկտեմբերյան, Պերմի և Լենինգրադի շրջաններից—որեկան յերկու գնացք:

4. 1935 թվի հոկտեմբերի 1-ից.

ա) Բոլոր գնացքները, բացառությամբ հավաքականների և տնտեսականների հետևյալ ուղղություններով. Ուրալո—Կուզբաս Հար.—Ուրալսկի, Պերմսկի, Ոմսկի և Տոմսկի՝ յերկաթուղիներով.

բ) Ուսսուրիսկի յերկաթուղիներից բոլոր դուրս յեկող գնացքները, բացի հավաքականներից.

գ) Հյուսիսային բոլոր մարշրուտային գնացքները Պլեսսցկի շրջանից Մոսկվա.

դ) Որեկան վեց գնացքներ Դոնբասից Բատրակի Լիսկի—Բաղաշովի միջով Հարավ-Արևելյան, Դոնեցի, Մոսկվա—Դոմբաս, Բյազանո—Ուրալսկի և Մ-Կազանի յերկաթուղիներով:

5. Նոյեմբերի 1-ից բոլոր ապրանքատար գնացքները յերկաթուղիների ցանցով բացառությամբ տնտեսականների:

6. Ցուցված ուղղությունների մնացած ուղիղ գնացքներում բոլոր յերկաթուղիներում ոգոստոսի 1-ից գնացքի զլխի ավտոարգելակային մասի յերկարությունը, այսինքն արգելակավոր և միջանցիկ վագոնների, պետք և լինի կազմի 30 տոկոսից վոչ պակաս, սեպտեմբերի 1-ից կազմի 50 տոկոսից վոչ պակաս և հոկտեմբերի 1-ից կազմի 75 տոկոսից վոչ պակաս:

II

Ապրանքատար գնացքներն անընդհատ ավտոարգելակման դրեկն ապահովելու համար, յերկաթուղիների պետերի անձնական պատասխանատվությամբ, ինչպես նաև վագոնային, շոգեքարշային, շահագործ-

ման սպասարկումներ և վագոնանորոգման գործարանների պետերի անձնական պատասխանատվությամբ անցկացնել հետևյալ միջոցառումները:

7. Վերջացնել բոլոր վագոնների սարքավորումը միջանցիկ փողերով մինչև ս. թ. 1 սեպտեմբերի և նույն թվից արգելել յերկաթուղուց յերկաթուղուն ավտոարգելակներով, կամ միջանցիկ փողերով չսարքավորված վագոնների անցթողները: Բոլոր արգելակավոր և միջանցիկ վագոնների վրա կախել պակասող ռետինե բաղդիները վոչ ուշ, քան ս. թ. 25 հոկտեմբերի ապահովելով փողերում ազատ անցման մանրակրկիտ ստուգումը, նրանց խտությունը, ամրացումը վագոնին և ծայրի կտրվածքների ամբողջությունը:

8. Շոգեքարշների սառը լվացումների ժամանակ կազմակերպել ավտոարգելակների և ոգային նասոսների ստուգումը և փորձարկումն ապրանքատար պարկի բոլոր գնացքային շոգեքարշների վրա, վերացնելով այն մինչև ս. թ. 15 ոգոստոսը:

9. Նորոգման կետերում, դեպոներում և գործարաններում վագոնների ամեն տեսակ նորոգության դեպքում լրիվ սարքինություն բերել արգելակային սարքավորումը և առանձնապես ողացույցային ցանցը: Ցերկաթուղիների պետերին ս. թ. ոգոստոսի 15-ից ապահովել յուրաքանչյուր նորոգման կետի գծերը խտացրած ոգով լրիվ մատակարարելը, անհրաժեշտ դեպքերում ոգտագործելով շոգեքարշները և ապահովման յեղանակը հաղորդել մինչև ս. թ. ոգոստոսի 1-ը ՅՎ-ին, իսկ շոգեքարշներն ոգտագործելու դեպքում— ՅՎ-ին և ՅՏ-ին:

Առ 1-ն ոգոստոսի բոլոր շոգեքարշային և վագո-
նային տեղամասերում և նորոգման գործարաններում
կազմակերպել զուտ ավտոմատային արհեստանոցներ,
սեղաններով սարքերի փորձարկման համար և հատուկ
գործերով:

10. Ավտոարգելակների նորոգման և գնացքներն
ուղարկման պատրաստելու արտադրական բազայի ու-
ժեղացման համար, յերկաթուղիների պետերի ս. թ.
3-րդ կվարտալում ապահովել շինարարութան վեր-
ջացնելը, հարգարումը և հետևյալ ավտոարգելակային
վերահսկիչ կետերի գործարկումը:

Դոնեցի յերկաթուղիներ—Կուլյանսկ, Ռոգալո-
ն Յեկատերինո. Անդրկովկասյան—Դյանջա, Լենին-
սկան, Հյուսիսային-Կովկասյան—Մախաչ-Կալա, Դեր-
բենդ, Հանքային ջրեր. Ազով-Սևծովյան—Տիխոնեցկա-
յա, Կամենոլուժնյա. Հարավ-Արևելյան—Լիսկի, Պովո-
րինո, Գրյազի: Հարավ-Արևմտյան—Կաղատին, Դալ-
նիցա, Պոմոշնայա. Հարավային Չոգովայա-Ոսնովա.
Մոսկվա—Դոնբաս—Յելեց, Ուզլովայա, Վալուչկի. Ա-
րևմտյան Վորոբա, Բրյանսկ, Ժյոբին, Բելոր—Բալ-
տիյսկի—Սմոլենսկ, Որչա, Վյազմա, Մոսկվա—ապր.
Պոլոմսկոյնայա Մ.-Կաղանի—Մոսկվա-տեսակավ Բրի-
նայա, Ազրից, Մուսոմ Ա.-Կուրսկայա-Ոժերելյե, Գոր-
կի Կիրովսկի-Կեմ, Կիրովսկ. Հոկտեմբերյան—Դնո.
Հյուսիսային—Մոսկվա—Բուսիրսկայա, Իվանովո-Ջա-
բայկալի—Վ.-Ուղինսկ, Յերոֆեյ Պավլովիչ, Ոմսկի
Պետրոպոլիսի, Կարականդա, Բատարինսկ, Պերմա-
կի, Ն.-Տադիլ, Գորոբլազոդատսկայա, Ուստովլի, Յա-
նաուլ, Տոմսկի, Նովո-Կուզնեցկ Նյխե, Տայգա Արևել.
Սիրիերի Նիժնե-Ուդինսկ, Ուստուրսկի—Բոչատյովո,

Սկովոյադինո, Նիկոլսկ—Ուստուրսկ, Սուգսն, Խաբա-
րովսկ, Հարավային Ուրալսկի—Կուրգան, Բերդյաուլ,
Ռյադանո-Ուրալսկի, Հաշտարխան, Սամայո—Չլատո-
ուստովսկայա—Դեմա, Թուրքսիբ—Սեմպլատինսկ:

Բոլոր ավտոմեքանիկիչ կետերը մատակարարել
կիկարական ույժով, բացառությամբ հետևյալ կե-
տերի՝ Դերբենդ, Մախաչ-Կալա, Սմոլենսկ, Վորոբա,
Բատարինսկ, Կուրգան, Պոմոշնայա, Բերդյաուլ, Կեմ,
Բոչկարյովա և Սկովորոդինո, փոքր ավանովել կոմ-
պրեսորներով և ներքին այրման շարժիչներով:

Բացի զրանից, ս. թ. 4-րդ կվարտալում կառու-
ցել և շահագործման դնել վերահսկիչ կետեր՝ Նիկի-
տովկա, Ունեչա, Տուլա, Բալաշով, Ուրյշովո, Խախո-
գորկա, Բելոբեչենսկայա, Կեմերովսկ, Ստալինգրադ և
Կարտալի կայարաններում:

11. Յերկաթուղիների պետերին, հատկացրած
վարկերի հաշվին ստորև լիմիտային աշխատանքների
համար, ապահովել անհրաժեշտ աշխատանքների անց-
կացնելը գործող վերահսկիչ կետերի ուժեղացման և
նորոգման դեբի խտացրած ողով մատակարարման
լավացման համար:

12. Յերկաթուղիների և մատակարարման բա-
ժինների պետերին՝ գազային խողովակների համար
2-րդ և 3-րդ կվարտալների առանձնացրած ֆոնդերից,
նրանց նշանակումից անկախ, առաջին հերթին և լը-
րիվ կերպով ապահովել պահանջը, վագոնները միջան-
ցիկ փոփոխել լրացուցիչ կերպով սարքավորելու և ավ-
տոարգելակային վերահսկիչ կետերի և վագոնային
տեղամասերի նորոգման գծերի խտացրած ողակ մա-
տակարարելու համար:

13. Սաժերից, Մոժերեդ, Եքսպերմենտալնի, Կալույսկի և Կարմիր գծի գործարանների պետերին: Վազոնային կառավարչության կարգադրություններով հանձնել:

ա) Կոմպլեկտային բազուկային միացումներ կուսնելի թուշից հետեյալ քանակություներով:

Ամիսներ	Մշակմամբ	Առանց մշակմամբ
Հուլիսին	20.000	12.000
Ոգոստոսին	31.000	11.000
Սեպտեմբերին	40.000	13.000
Հոկտեմբերին	44.500	13.500
Նոյեմբերին և դեկտեմբերին	55.000-ական	—
Ընդամենը	245.500	49.500

բ) Լծակային փոխադրությունների մշակված գլանիկների 330.000 հ. մինչև 1-ն հոկտեմբերը և 200.000 հ. մինչև 1935 թ. դեկտեմբերի 1-ը:

գ) ՑՄՏ-ին անմիջապես սկսել իրենց գործարաններում արգելակային պահեստի մասերի պատրաստելը և 1935 թվի ընթացքում հանձնել վազոնային կառավարչության կարգադրություններով մոտ 15.000 ծայրի ծորակներ, 15.000 բացթողի կափարիչներ 5.000 «Կ» սերիայի բաշխիչի ներքին մասեր, 30.000 կափարիչներ Մատրոսովի արգելակի թեթևացրած բացթողի:

14. Առանձնացնել գազային մատնաչափային խողովակներ, միջանցիկ վազոնների վրա կախելու համար ՑՎ-ի կարգադրով հուլիսին 500 խ. և ոգոստոսին 500 խ. ՀՃԺԿ-ի ներքին ֆոնդերի հաշվին:

15. Առանձնացնել լրացուցիչ կերպով վազոնային տնտեսությունը կապիտալ ներդրումներով ապրանքատար պարկը լրիվ ավտոարգելակման փոխադրման աշխատանքների անցկացման համար 10 վերահսկիչ կետերի կառուցման համար—700 հազար ուրբլի և կենտրոնացրած պատվերների ծախսերի համար՝ 1.700 հազար ուրբլի:

16. Յերկաթուղիների պետերին վերանայել նորոգման և արգելակների սպասարկման բանվորների առկայությունը յուրաքանչյուր վազոնային տեղամասում առանձին և նրանց կազմը կոմպլեկտավորել իսկական պահանջի սահմաններում Յ-րդ կվարտալի համար բաց թողած կոնտիդենտների հաշվին:

17. Ավտոարգելակների վորակյալ կազերով սպասարկելու համար Յոպկադերին, ՑՎ-ին և յերկաթուղիների պետերին ապահովել ընթացիկ տարում սովորեցնելու 10.000 գնացքային յուղիչների, նրանց վերավորակավորելով յուղիչ-ավտոմատիչիկների, Յոպկադեր ընկ. Չյորնիին յուղիչների պատրաստման ծախսերի համար հատկացնել 20.000 ուրբլի:

Յերկաթուղիներում անցկացնել ամսական կուրսեր արգելակների նորոգման շոգեքարշային գեպոնների բրիգադիրների, դաստիարակ մեքենավարների և ավտոարգելակների հրահանգիչների վորակավորման բարձրացման համար:

Սովորեցնել մինչև ս. թ. սեպտեմբերի 15-ն առանց արտադրությունից կտրելու կազմիչներին, կցիչներին և կոնդուկտորներին, ավտոարգելակներին վերաբերվելուն բազուկների կցման մասում, նրանց կախմանը, ծայրի և ստուպ-ծորակների կոթերի հետ վարվելուն,

դրա համար աշխատանքի ներգրավելով վագոնային սպասարկումների տեխնիկական անձնակազմը:

Կայարանների պետերին, վագոնային տեղամասերի ներկայացուցիչների հետ միասին, մինչև 1 հոկտեմբերի ստուգել այդ աշխատողների պատրաստուժը:

Պարտավորեցնել սպասարկումների և տեղամասերի վարչա-տեխնիկական անձնակազմն ուսումնասիրել ավտոարգելակային գործը և քննության հանձնել տեխմինիումի ծավալով մինչև ս. թ. 1 հոկտեմբերը:

Սահմանել, վոր վագոնային և շոգեքարշային տեղամասերի պետերը, նրանց տեղակալները, վարպետները, տեխբյուրոյի աշխատողները և վերաստուգիչները, վորոնք մինչև ս. թ. 1 հոկտեմբերը քննություն չեն հանձնել ավտոարգելակների վերաբերյալ, չեն կարող վարել իրենց պաշտոնները:

Ապահովել գծային և տեխնիկական անձնակազմին ավտոարգելակային գործին սովորեցնելը Մոսկվայի Կենտրոնական կուրսերում. մինչև տարվա վերջը մնացած ժամանակում — վագոնայիններ — 150 մ. և շոգեքարշայիններ — 200 մ.:

18. Ավտոարգելակներին սովորեցրած կադրերը պահելու համար, արգելել այդ աշխատողների տեղափոխումն ուրիշ պաշտոնների, վորոնք կապված չեն ավտոարգելակների սպասարկման հետ:

19. Գծային աշխատողները հրահանգումն ավտոարգելակների վերաբերյալ լավացնելու համար յուրաքանչյուր յերկաթուղու վագոնային սպասարկմանը սարքավորել հրահանգող արգելակավոր վագոն:

20. Ավտոարգելակների նորոգման և սպասարկման վորակյալ կադրերի ընտրման և պահման նպա-

տակով՝ ա) բարձրացնել վագոնային փականագործ ավտոմատչիկների վճարման դրույքները միջին հաշվով 20 տոկոսով, չհաշվելով հատուկ սահմանված հավելումները, և բ) յուղիչ-ավտոմատչիկների վճարումը, վորոնք քննությունը հանձնել են, 170 ռուբլու փոխարեն սահմանել ամսական 200 ռուբլի, չհաշվելով հատուկ սահմանված հավելումները:

21. Մտցնել ավտոարգելակների աշխատողներին պարգևատրում, ավտոարգելակների սարքավորման և նորոգման պլանի կատարման և գերակատարման համար և գնացքներում արգելակների սարքին գործելու համար:

ՅՎ-ին մինչև ս. թ. 15 հուլիսի յերկաթուղիներին ուղարկել կանոնադրություն պարգևատրման մասին:

22. ՅՎ-ին ընկ. Ոստրովսկուն, ՅՏ-ին ընկ. Կուրիցինի և Տրանսյերկաթհրատ — ընկ. Պոպովին մշակել և հրատարակել մինչև ս. թ. 1 ոգոստոսի հրահանգ ավտոարգելակների սպասարկման և նորոգման վերաբերյալ. շոգեքարշային մեքենավարին և նրա ողնակաին, ուղեկցողին, կոնդուկտորին, յուղիչ-ավտոմատչիկին և յուղիչին, գնացքի պետին:

23. Այն կապակցությամբ, վոր լրիվ ավտոարգելակման փոխադրվելու գործում բացառիկ նշանակություն ունի գնացքների ճիշտ կազմելը, իսկ յերկաթուղիների մեծամասնության մեջ մինչև հիմա այդ բնագավառում բացակայում և ելեմենտար կարգապահությունը — գնացքները, վորոնք անկանոն կերպով ընտրված ավտոարգելակավոր և միջանցիկ վագոններով են կազմած մեկ յերկաթուղուց մյուսին փոխա-

դրելիս համարել անկանոն կազմված և ս. թ. ոգոստոսի 15-ից խոտանման յենթակա:

ՅԴ-ի և ՅՎ-ի 1934 թ. 10-ն ապրիլի № 6614 հեռագիրը, վորը թույլ եր տալիս միջանցիկ վագոնները չընտրել—վերացնել: Ապրանքատար զնացքներն ավտոարգելակներով ուղարկելիս շոգեքարշները մատուցել կետերում, վորոնք ունեն կայարանային կոմպրեսորային սարքավորումներ և ոգատար ցանց, 10 րոպե առաջ, իսկ կայարանային ցանց չունեցող կետերում—ուղարկելուց 20 րոպե առաջ:

24. Այն կապակցությամբ, վոր բազուկների հափըշտակման և բազուկների ու ուրիշ արգելակային մասերի փչացման դեմ յերկաթուղիներում հարկ յեղած պայքար չե մղվում, իսկ այդ հափըշտակումները ձախողում են լրիվ ավտոարգելակման անցնելուն, յերկաթուղիների պետերին և քաղբաժիններին կադմակերպել վճռական պայքար այդ հափըշտակումների դեմ, վորպես ֆասարտրական ակտերի և խորտակումներ կազմակերպելու դեմ, անմիջապես մեղավորներին դատական պատասխանատվության յենթարկելով:

25. Յերկաթուղիները սիստեմատիկորեն հրահանգելու համար լրիվ ավտոարգելակման փոխադրման և ներկա հրամանի կատարման վերահսկման համար սահմանել ժամանակավորապես մինչև նոյեմբերի 1-ը ՅՎ-ին կից ավտոարգելակումների տեսուչ-հրահանգիչների հատուկ խմբակ 10 հոգուց բաղկացած:

26. Ներկա հրամանի կենսագործման համար անձնական պատասխանատվությունը դրվում է վագոնային սպասարկումների պետերի վրա:

Յերկաթուղիների պետերին ստուգել լրիվ ավտոարգելակման փոխադրելու աշխատանքի ընթացքը և ամեն ամիս զեկուցել ինձ իր ստորագրությամբ աշխատանքի ընթացքի մասին:


III

Պարզում եմ, վոր ներկա ավտոարգելակային տնտեսության միանգամայն անբավարար դրությունը պատահական չե և վոր նա հետևանք ե յերկաթուղիների կողմից միանգամայն արհամարհական վերաբերմունք դեպի վագոնային տնտեսությունը: Յերկաթուղիները դեռ ևս յեկնում են նրանից, վոր վագոնները նրանց չեն պատկանում, ուստի չեն զբաղվում վագոնների նորոգությամբ, փաստորեն թույլ տալով նրանց քայքայումն:

Յերկաթուղիների պետերից պահանջում եմ ներկա հրամանի լրիվ և ճշտորեն կատարումն ավտոարգելակման մասին և իր վագոնային ամբողջ տնտեսության արմատական լավացումը:

Հաղորդակցության ճանապարհների
ժողովրդական կոմիսար՝ Լ. ԿԱԳԱՆՈՎԻՉ

Центральная библиотека



74963

9114

Հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիտեի հանձնարարությամբ հաստատում եմ. վագոնային տնտեսության կենտրոնական կառավարչության պետ՝
Մ. Գ. ՈՍՏՐՈՎՍԿԻ
31-ն հունիսի 1935 թ.

ԻՆԲՆԱՄՐԳԵԼԱԿՄԱՆ ՀՐԱՅԱՆԳ ՈՒՂԵԿՅՈՂԻ ՅԵՎ ԿՈՆԴՈՒԿՑՈՐԻ ՀԱՄԱՐ


(Ի փոփոխություն «Մարդատար և ապրանքատար գնացքների ավտոմատ արգելակների գործադրման և պահպանման կանոնների» (բր. Տ/273 1930 թ.) գլուխավոր և շարքային կոնդուկտորների համար հրահանգի մասում (հավելված 4), ուղեկցողների համար (հավելված 5):

1. ԱՐԳԵԼԱԿՆԵՐԻ ԶՆՆՈՒՄԸ ԳՆԱՑՔՆԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼԻՍ

Մարդատար և ապրանքատար գնացքներն ընդունելու ժամանակ ուղեկցողներն ու կոնդուկտորները պարտավոր են.

§ 1. Արգելակումով ստուգել ձեռքի արգելակների գործողությունը:


Արգելակված վիճակում բոլոր կոճղերը պետք է սեղմված լինեն անիվներին, իսկ պտուտակի կտրու-



Ձև 1. Ձեռքի արգելակն արգելված դրու-
թյամբ: Ռեզերվի պաշարը 75 մմ:

վածքի պաշարը պետք է լինի 75 մմ. (ձև № 1): Ար-
գելակման պտուտակը պետք է շարժվի թեթև, պտու-
տակը և ատամնավոր անիվը պետք է յուղված լինեն:

§ 2. Ձննել կանգառ-ծորակները: Բոլոր ծոկակները
պետք է փակված լինեն (ձև 2) և պլոմբված:




Ձև 2 Ստոպ-ծորակի փակ դրությունը:

§ 3. Ստուգել բաց թողնող կափարիչներին աշխա-
տանքը: Կոթերը պետք է ազատ պտտվեն և բանան
բաց թողնող կափարիչները (ձև 3):

§ 4. Փակել վերջին վագոնի ոգատար խողովակի
յեռակի ծայրի ծորակը և կախել միացնող բազուկը կա-
խիչի կամ խլարի վրա (ձև 4): Միացնող բազուկը
թողնել առանց կախելու կամ ծռել նրան բռնատեղե-
րում կամ ձգանի ճանկի մոտ՝ արգելվում է (ձև 5):


§ 5. Այն կայարաններում, ուր չկան ավտոմատիկ-
ների փականագործներ, կցել չմիացված ռետինե բա-
զուկները (ձև 6):

Բազուկների կցումը կատարել միայն վագոնների




Ձև 3. Բացթողի կափարիչի աշխատանքի ստուգումը:

կցումից հետո, թեկուզ մեկ ձգանի վրա, իսկ ավտո-
ձգանով կահավորված վագոնների ժամանակ՝ միայն
այն դեպքում, յերբ յերկու վագոնների ավտոկցումով
գլխիկներն են կցվելու:



Ձև 4 Մայրի ծորակը փակ և, բացվելը
կախոցի վրա յե:

Շոգեքարչի բազուկները վազոնների հետ միաց-
նելիս հողմահարել մագիստրալը, տենդերի ծայրի ծո-
րակը մի քանի անգամ բանալով և փակելով (ձև 7):




Ձև 5. Անկառն դրոթյուն—բազուկը բռնակի յետև
անցկացնելիս կոտրված է:


Ձանել բազուկների գլխիկները, մաքրել նրանց փոշուց
և ցեխից.—անկառն խտացնող ողակները փոխել, իսկ
չեղածների տեղը դնել նորերը: Բազուկները միացնե-
լուց հետո բանալ յերկու ծայրային ծորակները, նախ
տենդերինը, ապա վազոնինը:

§ 6. Ստուգել արգելակների կցումը.

ա) Մարդատար այն վազոնները, վորոնք կահա-
վորված են Վեստինհուզի արագ գործով յեռակի փա-
կանով, յեռակի փականի կոթը պետք է լինի դեպի




Ձև 6. Բազուկների կանոնավոր կցումը:




Ձև 7. Ողացույթ խողովակի հողմահարումը:

ներքև (ձև 8): Այդ դիրքի մեջ արգելակը կցված է և գործում է արագաշարժով: Յեթե յեռակի փականի կոթը դրված է անկյան տակ — արգելակն անջատված է. — յեթե յեռակի փականի կոթը հորիզոնական է դրված, ապա փականը կաշխատի առանց արագացնողի: Յեռակի փականի կոթն այդ դիրքով կարող են դնել միայն փականագործ-ավառմատիկը կամ վազոնները զննիչը, իսկ ուղու վրա յուղողը:



Ձև. 8. Արագ գործող յեռակի կախարիչի բռնակի դրութիւնը:

բ) Ապրանքատար վազոնների վրա, յեթե անջատիչ ծորակի կոթը դրված է բաշխիչի խողովակի հավելվածի վրա, կամ խողովակի յերկարությամբ (ձև 9),




Ձև 9 Արգելակը միացրած է (ողտաշխիչներ «Ա.Պ-1», «Կ» և «Մ»):

արգելակը կցված է, իսկ յեթե խողովակի լայնությամբ է դրված՝ անջատված (ձև 10):

§ 7. Ուղեկցողը պետք է արտաքինից զննի վագոնի արգելակային սարքավորումն: Էծակային փոխանցման պլանիկները պետք է անպայման շալկնտավորված լինեն. — յերկարության քաշերի վրա ձգան ագույցների (մուֆտա) առկայության դեպքում քաշերը պետք է ամրացվեն հակադայկաներով: Արգելակա-

յին կաղապարների հաստութիւնը 12 մմ. պակաս չը-
պետք է լինի յերբ ամրացվում է սանդալին (բաշմակ)
չեկսով և բոլորով ամրացնելիս 30 մմ. վոչ պակաս:
Նախապահական ճանկերը տրիանգելների պետք է լի-



Նկ. 10. Արգելափակ անջատած և (ողաբաշիկներ
„ԱՊ-1“, „Կ“ և „Մ“):

նեն իրենց տեղերում և լավ ամրացված: Նախապահ-
ական ճանկերի բացակայութեան դեպքում գնացքը չը-


պետք է մեկնի: Նկատված թերութիւնների մասին ու-
ղեկցողը պարտավոր է հայտնել վագոններ ղննարկող-
ին և նրանից պահանջել թերութիւնների վերացումը:

2. ԳՆԱՑՔՆԵՐԻ ԱՐԳԵԼԱԿՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ ՄԵԿՆԵԼՈՒՑ ԱՌՍՁ

§ 8. Գնացքի արգելակների փորձարկումը միջան-
կյալ կայարաններում, ուր չկան գնացքներ ստուգող-
ներ և փականագործ—ավտոմատիկներ փորձարկումն
ապրանքատար վագոնի կատարում են կոնդուկտորը և
յուղողը, իսկ մարդատարում՝ պոչի կոնդուկտորը և
ուղեկցողները բրիգադիրը: Փորձարկում կատարվում
է շոգեշարժի բոլոր զատումներից հետո կամ կազմի
բազուկների անջատումից հետո, նույնպես և առանձին
վագոնների կցման դեպքում, գնացքի 20 բուսեյից ա-
վելի կանգառի դեպքում: Արգելակի փորձարկման
ժամանակ կոնդուկտորական բրիգադան և ուղեկցող-
ները մեքենավարի կարճ սուլոցով պետք է վոտքով
ստուգեն կոճղերի սղմվածութեան խտութիւնը: Յեր-
կու կարճ սուլոց տալու դեպքում (բացթող) ստուգում
են թե հեռացել են արդյոք բոլոր արգելակային վա-
գոնների կոճղերն անիվներից: Նկատված աննորմալու-
թիւնների մասին հաղորդելու է հայտնել վագոնները
ղննարկողին, վագոնների ղննարկման մոտակա կե-
տում, իսկ անհետաձգելի դեպքերում՝ շոգեշարժի մե-
քենավարին:

3. ԱՐԳԵԼԱԿՆԵՐԻ ԴԻՏՈՒՄԸ ԳՆԱՑՔԻ ՈՒՂՈՒՍ ԳՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Գնացքի հետ գնալու ժամանակ ուղեկցողները և
բոլոր կոնդուկտորները պարտավոր են.




Ձև 11. Բացթողի կափարիչի մետաղալարը (поводок)
մարդատար վագոնի ներսը:

§ 9. Հետևել արգելակների կանոնավոր գործողությանը և նկատված անկանոնությունների մասին հայտնել. ուղեկցողը—բրիգադիրին կամ գնացքի պետին, իսկ կրտսեր կամ ավագ կոնդուկտորները՝ գլխավոր կոնդուկտորին և գնացքը յուղողին, իսկ զննարկման կետերում գլխավոր կոնդուկտորը և յուղողը—վագոնները զննարկողին:

§ 10. Հետևել, վորպեսզի ստոպ-ծորակներին մոտե-

նալն ազատ լինի և վորպեսզի ուղևորները նրանց վրա իրենք չկախեն:

§ 11. Մեքենավարի տված յերկու յերկար սուղոցների դեպքում, վոր նշանակում և բացթողել արգելակը, կամ, յեթի գնացքի ընթանալու ժամանակ կնկատվի ինքնաարգելակում (վորողվում և ըստ կոճղերի ադմուկի),—միջոցներ ձեռք առնել արգելակը բաց թողնելու համար բաց թողնող կափարիչի սանձափակի (պալոդկա) ողնությամբ (ձև 11): Սանձափակը բարձրացած վիճակում 5—6 վարկյանից ավել չպահել:



Ձև 12. Ստոպ-ծուակը բաց դրությամբ:

Յեթի վագոնի ներսում սանձափակ չկա, իսկ ինքնաարգելակումը սպառնում և փորվածք առաջացնել անվի վրա, ապա ուղեկցողն ու կոնդուկտորը գնացքը պետք և կանգնեցնեն ստոպ-ծորակով առաջին իսկ տափարակում կամ թեքվածքում: Ապրանքատար վա-

դոնի բացահայտ ինքնաարգելական դեպքում անիվներին փորվածք առաջացնելու սպառնալուքով, կոնդուկտորը նույնպես պարտավոր է կանգնեցնել գնացքը ստոպ-ծորակով:

Այն դեպքում, յերբ անհրաժեշտ է ընթանալ խառն օրգելակներով (զլխի մասը ավտոմատիկ, իսկ պոչայինը ձեռքի արգելակներով) գնացքը ստոպ-ծորակով կանգնեցնելն արգելվում է. կանգառքը կատարվում է կարմիր ազդանշան տալով:

Գնացքի կանգառքից հետո բաց թողնել արգելակված վագոնի արգելակը բաց թողնող փականով:

Ցեթե անկանոն լինելու պատճառով արգելակն անջատվում է, ապա այդ մասին հարկավոր է հայտնել գլխավոր կոնդուկտորին, իսկ վերջինս տեղեկացնում է մեքենավարին:

§ 12. Շոգեմեքենայից արգելակման ազդանշաններ տալու դեպքում (կրկնվող յերեք սուլոց) անմիջապես բանալ ստոպ-ծորակը (ձև 12) և արագությամբ արգելակել ձեռքի արգելակը: Նույնպեսի միջոցներ, գնացքը շուտափույթ կանգնեցնելու համար, պետք է ձեռք առնել և հրգեհի ու մարդկանց հետ դժբախտությունների պատահելու դեպքում և այլն:

Ցեխնիկական գննարկման տեղ հասնելուն պես գլխավոր կոնդուկտորը պետք է գննարկողին հայտնի ստոպ-ծորակի կնքման անհրաժեշտություն մասին:

§ 13. Այն դեպքում, յերբ գնացքը կանգնեցվում է ստոպ-կրանով վորևե ուղևորի կողմից, պարզել հատկապես հիմ կողմից է կատարված գնացքի կանգառքը, ինչ պատճառով և հայտնել գլխավոր կոնդուկտորին կամ գնացքի պետին՝ համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար:

§ 14. Մարդատար գնացքներով ընթանալիս ուղևորներին ստոպ-ծորակի նշանակություն և դործողություն հետ ծանոթացնելու նպատակով ուղևորների ուշադրությունը դարձնել ստոպ-ծորակի տեղի և նրանից ոգտվելու կանոնների վրա:

§ 15. Արգելակների անջատման դեպքում, վոր կարող է կատարվել միայն գնացքի պետի կամ գլխավոր կոնդուկտորի թույլտվությամբ, ուղևորներից բաց թողնել ողբ դուրս տանող կափարիչով, վորի համար դուրս տանող քաշիչը ձգված պահել այնքան ժամանակ, մինչև վոր կղադարի շվվոցը:

§ 16. Ավտոմատ արգելակները գնացքում փշանալու դեպքում և հետագայում ձեռքի արգելակումով ընթանալիս կոնդուկտորը և ուղեկցողը պարտավոր են բանեցնել ձեռքի արգելակները և դործի դնել մեքենավարի ազդանշաններով (յերեք սուլոց—արգելակել, յերկու սուլոց—բաց թողնել):

§ 17. Հետևել արգելակային կահավորանքի բոլոր մասերի պահպանմանը, հատկապես ուետինն բազուկների:

§ 18. Գնացքը վերջին կայարանը հասնելուն պես ուղեկցողները և գլխավոր կոնդուկտորը պետք է վագոնները գննարկողին հայտնեն նկատված բոլոր պահասությունների մասին (արգելակման աշխատանքի մեջ) և պահանջել նրանց վերացումը:

ՃՀԺԿ վագոնային տնտեսության կենտրոնական
վարչության գլխավոր ինժեներ՝ ԱԿՍՆՆՈՎ
Ավտոարգելակման սեկտորի պետ՝ ԳՐԻՆՇՏԵՑԵ

**ԱՎՏՈՐԳԵԼԱԿՄԱՆ ՍԻՍՏԵՄՆԵՐԸ ՅԵՎ ԽՍՀՄ ՅԵՐ-
ԿԱՅՈՒՂՍՅՈՒՆ ՃԱՆԱՊԱՐԶՆԵՐԻ ՇԱՐԺԱԿԱՆ ԿՍՋՄԻ
ՈՂՍԲԱՇԽՄԱՆ ՅԵՌԱԿԻ ԿԱՓԱՐԶՈՎ ՏՊԵՐԸ**

1. Վեստինհաուզի սիստեմի մարդատարի արգելակ արագագործ կափարիչի (ողաբաշխիչով)

Այս արգելակը գործադրվում է մարդատար վազոններում:


Արագագործ յեռակի կափարիչի արտաքին տեսքը պատկերված է ձև 8-ում:

Գործիքների տեղադրումը Վեստինհաուզի արգելակով կահավորված վազոնում ցույց է տրված ձև 13-ում:

Յուրաքանչյուր արգելակումով և առանց արգելակման վազոնի տակով անցնում ողատար դյույմային խողովակ, վոր կոչվում է արգելակման մագիստրալ:

(1) Վազոնի յուրաքանչյուր ծայրից մագիստրալը վերջանում է ռետինե միացնող բազուկով (5), կցող գլխիկ ռենցող (6), վորի մեջ գտնվում է ռետինե ողակ:

Յուրաքանչյուր արգելակային վազոն մագիստրալի յերկու ծայրերում ունի ծայրային ծորակներ (4), վորոնք ծառայում են մագիստրալը գնացքի վերջում անշատել գնացքի մի մասը մյուսից: Փակ ժամանակ ծայրային ծորակի կոթը դրվում է խողովակի լայնությամբ, իսկ բաց ժամանակ — յերկարությամբ:



Քւ 19. Վազոնի սարքավորումը արագ դորձող յնակի կապանով:

Արգելակային վազոնի տակ ժազխատրան ունի փոշերոնիչի (2) արտուղղիչ (3), վոր թույլ չի տալիս աղբին մտնել յեռակի կափարիչը: Արտուղղիչը հաղորդում է մազխատրան արգելակային ապարատի հետ, վոր կազմված է. ա) յնակի կափարիչից (7), վորի միջոցով կատարվում են արգելակման և թողարկման լիցքերը, բ) պահեստի ռեզերվուարի (9) սղմված ողի համար, վոր անհրաժեշտ է արգելակման ժամանակ և գ) արգելակային գլանի (ցիլինդրի) (8) համար, վոր հանդիսանում է արգելակման ուժի աղբյուր, վորը տրվում է արգելակային կաղապարներին վազոնի լըծակային փոխանցման միջոցով:

Պահեստի ռեզերվուարի կամ նրա խողովակի վրա հարմարեցված է բաց թողնող կափարիչ, վորի ոգնությամբ կարելի յե տվյալ վազոնի արգելակը բաց թողնել: Բաց թողնող կափարիչից անցրված են ձգիչներ (ձև 3) վազոնի յերկու կողմերում և բացի այդ, նաև վազոնի ներսը (ձև 11): Ամեն մարդատար վազոնում կա առնվազն յերեք ստոպ-ծորակ, վոր ծառայում են զնացքը կանգնեցնելու համար ծայր կարևորության դեպքում:


Ստոպ-ծորակները դրվում են. — մեկական տամբուրներում և վազոնի ներսում, բազաժների վազոններում, յերկուսից վոչ պակաս, փոստատարներում մեկից վոչ պակաս, վազոնի ներսում:

Ապրանքային վազոններում ստոպ-ծորակներ դրվում են արգելակման միջանցք տափարակներում (ձև 2):

2. Վեստինհաուզի սխտեմի ապրանքա-մարդատար արգելակն ունիվերսալ կատարելագործված յեռակի կափարիչով

Ունիվերսալ կատարելագործված յեռակի կափարիչ (ձև 14) դրվում է իզոտերմին վազոններում, յերթևեկող մարդատար և ապրանքատար գնացքներում.

Այդ յեռակի կափարիչն ունի լայն կամերա և ռե-
ժիմային խթան իր կոթով:




Ձև 14. Ունիվերսալ՝ կատարելագործված յեռակի
կլապան (ողաբաշխիչ):

Ապրանքային ռեժիմի դեպքում կոթը թեքված ար-
գելակային գլանի կողմը «Т» տառի ուղղությամբ:
Կոթն այս դրության մեջ է դրվում ապրանքատար
գնացքի ընթացքի ժամանակ:

Մարդատար ռեժիմի դեպքում կոթը թեքված է ար-
գելակման գլանից դեպ «Н» տառի կողմը: Այդ դրու-

թյան մեջ է դրվում կոթը մարդատար գնացքի ըն-
թանալու ժամանակ:

Մարդատար ռեժիմի դեպքում վազոնն արագու-
թյամբ արգելակվում է 10—12 վարկ. ընթացքում,
իսկ ապրանքային ռեժիմի դեպքում՝ դանդաղ—35—40
վարկ.:




Ձև 15. «ԱՊ-1» սերիայի ողաբաշխիչ:

Արգելակային ապարատի և այլ մնացած կահավո-
րանքի դասավորումը նույնպիսի չէ, ինչպես Վեստին-
հաուզի արագադուրծ յեռակի փականի դեպքում:

3. Կազանցեվի սխտեմի արգելակն ողաբաշխի-
չով «АП-1».

«А —1» սերիայի ողաբաշխիչը (ձև 15) դրվում է
ապրանքատար վազոններում առավելագույն ցիստերնե-
րի վրա:




Ձև 16. Վազանի սաղմավորումը «ԱՊ-1» սերիայի ուղաբաշխիչը:

«ԱՊ-1» բաշխիչի տեղը արգելակային վազոնի տակ՝ ցույց է տրված ձև 16-ում:

Ուղաբաշխիչը (4) և միջանկյալ մասը դարձված են արգելակային զլանի կողմը (5): Անջատիչ ծորակը (3) դրված է մագլիստրալից արտուղղվող խողովակի վրա

դեպի ուղաբաշխիչը (4): Բաց թողնող կափարիչը դըրված է միջանկյալ մասի վրա:

Արգելակային զլանի յետևի խուփի ֆլանցին (5) մոտենում է սլահեստի ռեզերվուարի խողովակը (8):




Ձև 17. «Կ» սերիայի ուղաբաշխիչը:

Գնացքների արգելակներն առաջին անգամ լիցք տալիս տեղի յե ունենում վազոնների ինքնակամ արգելակում: Արգելակի բաց թողնելն ստացվում է միայն մագլիստրալում նորմալ ճնշմանն հասնելիս (5 մթնոլորտ):

4. Կազանցեվի սիստեմի արգելակ «Կ» սերիայի արգելակով

«Կ» սերիայի ուղաբաշխիչը (ձև 17) կիրառվում է բոլոր տիպերի ապրանքատար վազոնների վրա:


Գնացքի արգելակների լիցքի ժամանակ ինքնա-
կամ արգելակում չի կատարվում:




Չկ 18 վազանի սաղմունի մոդելը

Չկ 18-ում ցույց է տրված ուղաբաշխիչը (1): Ուղա-
բաշխիչը սիացված է արտուղղող խողովակի մագնիսա-
րալի հետ, վորի վրա դրված է անջատիչ ծորակը (3)

լրացուցիչ ռեգերվուարի հետ (4): Բաց թողնող փակա-
նը (5) դրված է լրացուցիչ ռեգերվուարի վրա և վա-
զանի յերկու կողմից ունի ձգիչներ (6) արգելակը բաց
թողնելու համար:



Չկ 19. «Մ» սերիայի ուղաբաշխիչ:




Ձև 20. Վազոնի սարքավորումը «Մ» սերիայի ոգաբաշխիչով:

3. Մատրոսովի սխտեմի ապրանքատար տիպիկ արգելակ


Մատրոսովի սխտեմի արգելակն ընդունված է վորպես տիպական կահավորում ԳՍՀՄ յերկաթուղային ճանապարհների ամբողջ ապրանքատար պարկի համար:

«Մ» սերիայի ոգաբաշխիչի արտաքին տեսքը ցույց է տրված ձև 19-ում, իսկ արգելակային ամբողջ կահավորանքը՝ ձև 20-ում:



Ձև 21. Մատրոսովի ոգաբաշխիչը դրված է բեռնած ռեժիմի:

Ոգաբաշխիչը (1) բանող կամերայով (2) դրված է վազոնի շվելերի վրա կամ լայնության շրջանակավոր գլղոնի վրա և ամրացված է նրանց յերեք բոլորով: Բաց թողնող կափարիչը (4) վազոնի յերկու կողմից ձգելներով, դրված է բանող կամերայի վրա: Անշտիչ կես դյույմանոց ծորակը (5) դրված է մագիստրալ խողովակի արտուղղման վրա: Բանող կամերայի տրալ խողովակի անցնում են յերեք խողովակ. դեպ մակրոնշտեյնից անցնում են յերեք խողովակ. դեպ մագիստրալը, դեպ արգելակային գլանը և դեպ պահեստի ռեզերվուաբը:



Ձև 22. Մատրոսովի ողաբաշխիչը դրված է դատարկ
ռեծիմի:

Ռեծիմային դիմհարը (ձև 21) «պարապ ռեծիմի»
գեղաքում շուռ ե տրված և դուրս ե ցցվում մարմնից
15 միլիմետր, իսկ «բեռնված ռեծիմի» ժամանակ խըր-
ված ե գործիքի խուփի հետ հերսնի տակ (32):

Մատրոսովի բաշխիչը պետքական ե արգելակային
դրանների բոլոր տրամագծերի համար:

Ապրանքատար վագոնների մի մասն արգելակային
գահավորանք չունեն (գլաններ, ողաբաշխիչներ, լծա-
կային փոխանցողներ), այլ ապահովված են միայն
մագնիստրալով և ռետինե միացնող բազուկներով: Այդ-
պիսի վագոնները կոչվում են пролетыми.

Ճշտի վագոնային տնտեսության Կենտրոնական
վարչության գլխավոր ենթակներ՝ ԱԿՍԵՆՈՎ
Ավտոարգելակման գործիքի պեղող զորհրդարան



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ապրանքատար գնացքների լրիվ ավտոարգելակման փախա-
գրելու մասին 3
2. Արգելակների գննումը գնացքներն ընդունելիս 19
3. Գնացքների արգելակների ստուգումը մեկնելուց առաջ . . 29
4. Արգելակների դիտումը գնացքի ուղևոր գնալու ժամանակ . 29
5. Ավտոարգելակման ախտեմները և ԽՍՀՄ յերկաթուղային
ճանապարհների շարժական կազմի ողաբաշխման յեռակի
կախարիչով ախելը 35

«Ազգային գրադարան



NL0281470

Э Г 1

10101

36-285

Н. К. П. С.
ИНСТРУКЦИЯ по АВТОТОРМОЗАМ
проводнику
и
кондуктору

Издание Зак. Жел. Дор.